

ՄԵԼԻ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Քրեական գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ»,
Կամ Tiflis, Rédaction «Mschak»,
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաւօրեայ օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խաւաքանչիւր տողաւորին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Անվերջ խոստումներ.—Ներքին ՏԵՍՈՒՆԻՆ. Մամուլ. Նամակ Եւրոպ. Նամակ Եւրոպ. լաւերից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Իրաւիկայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՅԻՐ-ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Յովսէփ կաթողիկոս Արղւթեան.

ԱՆՎԵՐՋ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ
Ահա մի քանի տարի է, որ մեզ կե-
րակրում են զանազան լուրերով և խոս-
տումներով էջմիածին կալուածների բա-
րեկարգութեան վերաբերութեամբ: Բայց
իրականութեան մէջ ոչ մի բայլ չէ ար-
ված զործնականագէտ բարեփոխող գոյու-
թիւն ունեցող անվերջաւոր վիճակը:
Մեզ մի քանի անգամ տեղեկացրին և
մենք «Մշակ» մէջ հաղորդեցինք, որ Վե-
հապաւ Կաթողիկոսը գնացել է Սանա-
տին և հաղորդելն նրանց կալուածների
բարեկարգութեան հարցին ընթացք տալու.
սակայն այդ կալուածները ոչ մի նոր, աւելի
բարձր, փոփոխութեան չեն ենթարկվել
և շարունակվում է վաղեմի անտեսու-
թիւնը:

Նոյն վերաբերում է և էջմիածին միւս
կալուածներին: Հոգեւոր իշխանութիւնը
իր թէ գրադած է նրանց բարեկաւու-
թեան հարցով և ժամանակ առ ժամա-
նակ լուրեր է տարածում իր դիտաւո-
րութիւնների և ծրագրերի մասին:
Վերջապէս, պէտք է արդեօք մի որ էլ
իրադարձութեան մասին մտածել թէ ոչ:
Տնտեսութիւնը խօսք է կարելի բարձր
գաւառիկ խոսակցութիւններով, հնարած
լուրերով և աննպատակ գրադրութիւննե-
րով:
Հոգեւոր իշխանութիւնը դեռ ցոյց է
տալիս մի փոքր հետաքրքրութիւն դէպի
գործ, երբ դիտաւորութիւնների և ցան-
կութիւնների մասին է լինում խօսքը, իսկ
երբ նրա առաջ դնում էք մի գործնական
ծրագիր, մի շօշափելի առաջարկ, նա իս-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅՈՒԼԻՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐԴՈՒԹԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐԴՈՒԹԵԱՆ
Յովսէփ Արղւթեանի գործունէութիւնը,
ինչպէս տեսաք մինչեւ այժմ, քաղաքական
էր գլխաւորապէս Բայց նա պատուաւոր տեղ
է բռնում և մեր գրականութեան պատուու-
թեան մէջ: Նա հեղինակ կամ թարգմանիչ
չէր, բայց հովանաւոր հանգրաւացու գրակա-
նութեան և նրա ավակցութեամբ ու խա-
լոյսներով լայն տեսան աշխարհի գրքեր, ո-
րոնցից մի քանիսը նորութիւններ էին մեզա-
նում:
XVIII դարում Արեւելեան Հայաստանի մէջ
դեռ չէր հաստատվել տպագրական գործը:
Միայն Սիմէոն կաթողիկոսը անգղիս արգել-
ների յաղկելով, կարողացաւ տպարան և թղթ-
երի չորմարան բաց անել էջմիածնում: Տպա-
րանը սկսեց գրքեր տպագրել, բայց մեծ մա-
ւածք եկեղեցական գրքեր, այնպէս որ մի ա-
ռանձին նշանաւոր դեր չը կարողացաւ կատա-
րել մեզանում: Յովսէփ արքեպիսկոպոսը, իր-
ան և Սիմէոնի աշակերտ, չէր կարող անտես
անել իւրաքանչեւ իր մի աշխարհի հզոր
զրդիչ, ինչպիսին է տպարանը Մենք տեսանք,
որ նա Պետերբուրգում գնեց յայտարարների
տպարանը և փոխարեք նոր-Նախիջևան
Հարկաւոր էր գրքեր տպագրել, այս գործի
մէջ էլ Արղւթեանը ցոյց է տալիս իրան յա-
տուկ եռանդը. տպագրվում են ոչ միայն եկե-
ղեցական գրքեր, օրացոյց, այլ և այնպիսի

կոյն յետ է մղում յարուցած հարցը, ա-
ռարկելով, որ փող չունի առաջարկածը
իրագործելու համար, որ նա դեռ պէտք
է նորից բնէ և ուսումնասիրէ ծրագրե-
րները: Հազար ու մէկ զանազան խոչըն-
դոտներ և արգելքներ:
Երբ առաջ հոգեւոր իշխանութիւնը ա-
մենեւին չէր խօսում կալուածների բար-
ւորման մասին, մենք սրտի խորին ցաւով
տեղեկանում էինք այդ մասին և սպա-
սում աւելի լաւ օրերի, իսկ այժմ գործ
են դնում մի ուրիշ քաղաքականութիւն.
անգաղար խօսում են և լուրեր տարա-
ծում, որ իբր թէ գրադած են և այն էլ
լուրը կերպով գրադած բարեկարգութեան
հարցերով: Հասարակութեան մի մասը
հաւատ է ընծայում լուրերին և հանգրա-
սացնում է իրան հոգաւորների խոստում-
ներով:
Սակայն բաւական է: Արդէն ամիսներ և
տարիներ անցան առանց որ և է գործ-
նական արգելքներ: Ո՛ր է ձեր դիտաւո-
րութիւնների և ծրագրերի իրագործու-
թիւնը: Ոոյց տուէք հեռանկարը: Հասա-
րակութիւնը այլ ևս հաւատ չէ ընծա-
յում խօսքերին, նա գործ է պահան-
ջում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Հանձարները Միջազգայնում են ընդհանուր
մարդկութեան մաքի վրա և չը կայ, կարծէք,
որ և է արգելք, որ նրանց խօսքը, նրանց
պատգամները մտնեն ամենահեռաւոր, ամենա-
խուլ անկիւններն անգամ: Ո՛վ կարող էր կար-
ծել, թէ Լեվ Տօլստոյ ջերմ երկրպագուներ ու-
նի և Հնդկաստանում, ընդհանրի մէջ: Մեծ
ձերունին ապրում է իր Եւրասիական Պոլսեան
կալուածում, շատ քիչ է երեւում քաղաքնե-
րի մէջ, բայց նրա իւրաքանչիւր գրուածքը
թեւաւորվում է, թեւում աշխարհի չորս կող-
մերը և ազդեցութիւն գործում ամեն տեղ:
«Русскія Вѣд.» լրագիրը պատմում է այն նա-

լուրը գործեր, ինչպիսին է «Տեղեկագիր» թարգ-
մանութիւնը, «Բժշկարան» և այլն:
Առանց Արղւթեանի հովանաւորութեան
Նոր-Նախիջևանի տպարանը չէր կարող այն-
քան աչքի ընկնող դեր կատարել, մի դեր, որ
համարում միակ պարծանքն է XVIII դարի ա-
րեւելեան հայութեան համար մտաւոր գոր-
ծունէութեան ասպարէզում: Յովսէփ արքե-
պիսկոպոսի նշանակութիւնը այդ գործի մէջ
գնահատելու համար կարելի է մասնացոյց ա-
նել այն, որ XVIII դարի վերջին տարիներում
նա չէր կարողանում չլուս-չլուս գալ Նոր-Նա-
խիջևան, ուստի և տպարանը դատապարտ-
վեց անգործութեան: Տեսնելով որ հեռուից չէ
կարելի գեկավարել հրատարակչական գործը,
Արղւթեանը տպարանը տանում է Աստա-
րան, բայց այդպիսի էլ չէ կարողանում շատ
բան անել, որովհետեւ երկար չէ մնում ուղա-
նորդութեան պաշտօնի մէջ:
Միայն հայերէն գրքերի հրատարակութեան
մասին չէր հոգում Արղւթեանը: 1799 թւա-
կանին նա Պետերբուրգում հրատարակեց մի
ռուսերէն գիրք՝ «Исповѣданіе Христіанскія
вѣры Армянскія персвѣ» վերնագրով: Գիրքը
բաղկացած է երեք մասից. 1) Հայոց եկեղե-
ցու դաւանութիւնը, 2) Մկրտութեան և
Դրօշմի կարգը և 3) Պատարագի թարգմա-
նութիւնները:
Առաջաքանի մէջ հրատարակելը առում է,
որ այդ գիրքը երկու նպատակով է հրատա-
րակվում, առաջինը՝ որովհետեւ Ռուսաստա-
նում ապրող հայերից շատերը արդէն մոռա-
ցել են իրանց մայրենի լեզուն, ուրեմն պոնէ
ռուսերէնով ծանօթանան իրանց եկեղեցու
խորհուրդների հետ, երկրորդը՝ հայոց եկեղե-
ցու մասին մի ճիշդ հակացողութիւն տա-
լու համար:

մակի բովանդակութիւնը, որ Տօլստոյ ստացել
է մի հնդիկից:
Նա առում է, թէ Տօլստոյի փիլիսոփայա-
կան դատողութիւնների մէջ հնդիկները
գտնում են իրանց սեփական աշխարհայեցո-
ղութիւնների նման շատ բաներ: Տօլստոյի
այն հեղինակութիւնների մէջ, որոնք նուիր-
ված են առանձին հարցերին, հնդիկների ու-
շադրութիւնը գրաւում է ոչ միայն այն, որ
գրանց մէջ ընկնում են հիմնական հարցերը
և նկարվում են մարդկային տանջանքները,
այլ և այն, որ Տօլստոյ տալիս է Եւրոպայի
սոցիալական և քաղաքական գրութեան
դիպոնդը ճիշդ այնպէս, ինչպէս հնդիկները
էլ են հասկանում իրանց սեփական դիտո-
ղութիւններով: Հնդիկ գրողը գտնում է, որ
ժամանակակից Եւրոպայի բոլոր դժբաղդու-
թիւնների պատճառը, չը նայած նրա ապ-
չեցնող առաջադիմութեան, այն կատարեալ
հակասութիւն է, որ կայ եւրոպացիների
անձնական և հանրային կեանքի կարմուռնե-
րների և քրիստոնէական սկզբունքների մէջ,
հակասութիւն, որ մի առանձին պայծառու-
թեամբ արտայայտվեց, հնդկացու կարծի-
քով, քրիստոնէաւ եւրոպացիների սոսկայի
գործողութիւնների մէջ «երբեմն երջանիկ»
Ձիւսաստանում: Այդ գործերը անջնջին հեռք
թողեցին ամիսական ազդեցիկ վրա:
Իւրաքանչիւր մարդ իրան մօտիկ առար-
կայի մասին է սիրում խօսել: Գրիստոնէական
սկզբունքներից երես դարձած Եւրոպայի յան-
ցանքները անշուշտ ուրիշ շատ օրինակներով
էլ կարելի էր հաստատել. այսպէս, հնդիկը կա-
րող էր յիշատակել 1895—1896-ի հայկական
կոտորածները, մենչեւ այժմ էլ շարունակվող
դժոխային դրութիւնը թիւրքաց Հայաստա-
նում, Վիրէլի կայսրի եղբայրանալը Աբդու-
Համիդի հետ, արանաւապետի տնադէր պատե-
րաբար, սկսված բոսալի վեհապետների շահե-
րի համար և այլն և այլն: Բայց հնդիկը խօ-
սում է միայն իր երկրի, իր հարեւանների մա-
սին: Այդպիսից վերցրած փաստերն էլ, ինչ
ասել կուզէ, պերճախօս են:
Նա առում է, որ քրիստոնէութեան և
իր կեանքի մէջ եղած հակասութեան պատ-
ճառով Եւրոպան ինքն էլ շատ տանջվում է
և հարկադրում է, որ ամբողջ աշխարհ էլ
տանջվի իր ձեռքի տակ, այնպէս որ ամբողջ
աշխարհի երջանկութիւնը այժմ կախված է
այն բանից, արդեօք քրիստոնէական աշ-

խարհը կը կերպարանափոխվի ճշմարիտ
քրիստոնէական ուղղութեամբ թէ ոչ: Յետոյ
նամակի մէջ նկարագրվում է անգլիական
միսիոնարների հոգեւոր ստոր մակերեսովը.
այդ միսիոնարների գործունէութիւնը, պա-
տուաստվելով ստորին, տգէտ խաւերում,
վերջանում է կատարեալ անաջողութեամբ:
Նամակագիրը տեսնում է, թէ իրանք, լուսա-
ւորված հնդիկները, անհամեմատ լաւ գիտեն
քրիստոնէութիւնը, քան այդ անգլիական
գործիչները:
Ապա, խօսելով անգլիական կառավարու-
թեան մասին Հնդկաստանում, հնդիկը առում
է, թէ կարելի է գոհ լինել այդ կառավարու-
թեանից, որ վերջ է դրել Հնդկաստանի ներքին
խռովութիւններին. բայց և այդպէս, հնդիկ-
ները գնահատվում են, որ անգլիական տիրա-
պետութիւնը չափազանց թանկ է նստում,
երկրի հարստութիւնները դուրս են տանվում,
իսկ տեղական ազգաբնակչութիւնը երկրի կա-
ռավարութեան մէջ մեծ մասնակցութիւն չու-
նի. պարբերական սովերը անգլիկ դժբաղդու-
թիւն են դարձել երկրի համար: Հնդիկների
ազգային ոգին դեռ շատ ուժեղ է:
Եւ նրանք հաւատում են, թէ կը գայ ժա-
մանակ, երբ ֆիզիքական ոյժը այլ եւս չի
լինի միակ պայման՝ քաղաքական ազա-
տութեան հասնելու համար, և առանց
ընդ յեղափոխութիւնների, ամուր եւ խա-
ղաղ առաջադիմութեան միջոցով, Հնդկաս-
տանը կը հասնի այն շրջանին, երբ նա կապ-
րի ազատ բարօրութեան մէջ, իբրեւ եւրո-
պացիների խաղաղ դրացին: Սե այս առա-
ջադիմութեան մէջ, որ պիտի կատարվի մա-
րողջ աշխարհում, անգլիկ նշանակու-
թիւն պիտի ունենայ, հնդիկի կարծի-
քով, աշխարհի կերպարանափոխութիւնը
Գրիստոնէ ճշմարիտ վարդապետութեան ո-
գով: «Մեր կարծիքով—գրում է նա—Գրիս-
տոնի ճշմարիտ վարդապետութիւնը չէ հա-
կատում մեր հաւատին և փիլիսոփայու-
թեան: Ճշմարիտ քրիստոնէան հնդկացի է
շատ կողմերով և իսկական հնդիկը—քրի-
ստոնէաւ է, ըստ էութեան:
Մարդկութեան արտում, երկրաբանի բո-
լոր կողմերում, կենդանի է. ապրում է մարդ-
կայնութեան զգացմունքը, այն բարձր ու սրը-
բազան գաղափարը, որ ձգտում է ոճնայնել
գայլի բարոյագիտութիւնը և խաղաղութիւն

խայթ էր դարձել մեր այնտեղ (սեղան) մըտ-
նելը—առում է նա.—և շատ թունալի նետեր
էին արձակել դէպի օրագրան Պատմոն արքե-
պիսկոպոսը մեզ սեղան տանելու պատճառով,
ինչպէս ինքը և ուրիշները պատմեցին մեզ:
որովհետեւ նրանց միտքը յուսաց՝ մեր մասին
գրած առասպելական և անխիղճ զրպարտու-
թիւնների ետեւից էր և մեզ անարժան
էին համարում մեր գտնվելը սեղանում: Բայց
Աստուածային հոգով վառված սրբազան արքե-
պիսկոպոսը յանդիմանում և ծաղրում է ա-
նիմատ մարդկանց բարբառանքները և ծի-
ծաղում է նրանց կուրութեան վրա: Սրանից
յետոյ շատերը սկսեցին յաճախել մեր եկեղե-
ցին պատարագի ժամանակ, նախարարներ և
իշխաններ, վաճառականներ և հասարակ ժո-
ղովուրդ *):
Ահա այս տեսակ միջոցներով էր Յովսէփ
արքեպիսկոպոսը աշխատում ջնջել այն սառ-
նութիւնը, որ կար ուսանելի մէջ դէպի հայե-
րը՝ կրօնական հակառակութեան պատճառով:
Այսպիսի գործերի մէջ նրան օգնում էր, ի
հարկէ, և այն փալային դիրքը, որ նա ունէր
ռուսաց պաշտօնական ամենաբարձր շրջան-
ներում: Գործը բաւական չը համարելով, նա
վերեւ յիշած գիրքն էլ հրատարակեց ցոյց տա-
լու համար, որ հայերը քրիստոնէաներ են և
նրանց առելու ոչ մի հիմք չը կայ:
VIII.—Նախորդիկութիւն և մահ:
1799 թւականին վախճանվեց էջմիածնի Դու-
կաս կաթողիկոսը: Սա մէկն էր մեր այն հո-
գեւորականներից, որոնք իրանց կեանքի նպա-
տակ են ընտրում հարստութիւն գիղելը: Դու-
կասը 19 տարեկան կաթողիկոսութիւն արււ. առ-
բողջ այդ ժամանակ նա նուիրակներ միջոցով
հարստութիւն էր հաւաքում, բայց միայն ցե-

*) «Կուսնկա», 1863, եր. 507:

ու համաձայնութիւն հաստատել ամեն տեղ եղբայրական հիմքերի վրա: Բուդապէսի հայ-րենակցի այս նամակը միայն այդ ճշմարտութիւնն է հաստատում: Եւ թող աճի, զարգանայ այդ զգացմանը, մինչեւ որ կը դառնայ աշխարհի միակ ահլըր...

«Մշակի» մէջ տպւած էր Իգմիրեան մրցանակաբաշխութեան մասին մի տեղեկութիւն, որ վերցրած էր Կ. Պօլսի լրագրիւններից: Մենք պէտք է խոստովանենք, որ թէ «Մշակի» բաժանադարութեան եւ թէ յոգուածի վերնագրի մէջ սխալմամբ տպւած է փոխանակ ընդմիջանշան: «Իգմիրեան»: Այս տպագրական սխալը առիթ է տուել НОВОЕ ОБОЗРЕНИЕ լրագրին յայտնել իր ընթերցողներին, թէ Իգմիրեան արքեպիսկոպոսը կտակել է մի գումար, որի տոկոսներից գրական մրցանակ է տրուում: մինչդեռ յայտնի է, որ այդ գումարը կտակողը Իգմիրեան արքեպիսկոպոսը չէ եղել (որ ոչ վախճանված է այժմ, ոչ էլ փող ունի կտակելու համար), այլ ռուսահայ վաճառական Իգմիրեանը:

Ի դէպ: Նոյն լրագիրը հաղորդում է, որ օգոստոսի վերջերում մի պարոն, Գարեգ, Լեւոնեան, պիտի դառնա Երուսաղէմի կարգաւոր Այդ պարոնի լրագիրը անուանում է «Երուսաղէմի հայ գրող, հեղինակ հայոց մամուլի պատմութեան վերաբերված մի գրքի»: Ճիշտ է, մեր անբախտ գրականութեան մէջ տարիներ առաջ լոյս է եկել միայն Լեւոնեանի գրած հայոց պարբերական աշխարհի պատմութիւնը, բայց դա անպիսի անգրագէտ մի գրութեան է, որը յիշատակել անգամ ամօթ պիտի համարվէր. եւ սակայն ռուս լրագիրը մի միտմտութեամբ, որ անուագին անհերքելի է, հէնց այդ տղայական գրութեան հիման վրա անուանում է այ. Լեւոնեանի «Երուսաղէմի հայ գրող»: Միթէ այդքան խղճով հասկացողութիւն ունի «НОВОЕ ОБОЗРЕНИЕ» լրագրի խմբագրութիւնը «գրողը անուան մասին»:

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒԹ

Յունիսի 20-ին

Շուշու թեմական դպրոցի ուսուցիչ պ. Սամուէլ Գիւլագեանը 41 տարի է ուսուցչութեան պաշտօն է վարում մեր դպրոցներում: 20 տարուց աւել Շուշու թեմական դպրոցում է. նրա հանգուցելը կինը 15 տարի վարժուհու պաշտօն է կատարել, զուտաւոր 10 տարի է նոյն պաշտօնն է վարում Պարսկաստանում: Ուրեմն մի ընտանիքի երեք անդամներ ամբողջ 66 տարի ծառայել են մեր կրթութեան գործին: Այսինքն մի ամբողջ սերունդ իր մասնակցութեամբ, պատանակութեամբ, երիտասարդութեամբ եւ այլով թեման հասակը անց է կացրել այդ գործիչների օրով եւ օրոշ չափով նրանցից:

Գերի եւ գողերի համար. ոչ էջմիածինը, ոչ հայ հոգեւորականութիւնը, ոչ ժողովուրդը ոչինչ բարոյական օգուտ չը ստացան այդ հարստութիւններից: Ղուկասը, լինելով աղէտ, առաւ էր ուսումը, հեռացնում էր փողը ի շատէ զարգացած հոգեւորականներին: Սիմէոն կաթողիկոսի սկսած գործերը նա ոչնչացրեց, այսպէս, Սիմէոնը, ահագին ծախսերի տակ մտնելով, ահագին տանջանքներ կրելով, կառուցել էր էջմիածնութեան թղթի գործարան: Ղուկասը քանդեց այդ գեղեցիկ հիմնարկութիւնը եւ նրա քարերից լին չինեց՝ գոմէշների լողանալու համար...

Այսպիսի մի հոգեւորականի յաջորդ ընտրելիս՝ պէտք էր, ի հարկէ, ցանկալ որ մի աւելի արժանաւոր եւ ժամանակի պահանջները հասկացող մարդ բարձրանար ամենայն հայոց կաթողիկոսական աթոռի վրա: Իսկ ո՞վ էր այն ժամանակ Յովսէփ արքեպիսկոպոսից աւելի արժանաւորը:

Բայց նրան չընտրեցին: Պէտք է ասել, որ այն ժամանակ կաթողիկոսի համազգային ընտրութիւն չը կար էլ: էջմիածնի միաբանութիւնն էր կաթողիկոս ընտրելի, առանց աշխարհականների մասնակցութեան. եւ եթէ այդ ընտրութիւնը հաւանութիւն էր գտնում Կ. Պօլսի հայոց պատրիարքի եւ ամիրաների կողմից, ամեն ինչ վերջացած էր համարվում: էջմիածնութեան հոգեւորականները ընտրեցին երկու կաթողիկոսացու. մէկը Կ. Պօլսի Դանիէլ պատրիարքն էր, միւսը Եփրեմ եպիսկոպոսը:

Արդու թեման համար վերաբերական էր այդ անուշադրութիւնը եւ նա սկսեց գործել եռանդով: Թիֆլիսի նրա բարեկամները, Գիորգի թագաւորի աջակցութեամբ, ճշոււմ գործ դրին էջմիածնի վրա եւ միաբանները շտապում են ընտրելիների ցուցակի մէջ աւելացնել եւ Յովսէփը:

օգտվել է: Պարոնը այդպիսի ընտանիքին, կը կոչեն ամենքը. կէցցէ՛ այդ գերդաստանի հայրը, որ բարի ուսուցիչ հանդիսանալով հանդերձ իր շաւղով է տարել իր ընտանիքը: կէցցէ՛ եւ այդ ընտանիքը, որ ընթացել է գերդաստանի հօր ընդգծած հասարակութեան օգտաւ ճանապարհով: Այլ եւս ինչ է պակասում իրանց, կը հարցնեն շատերը: Նրանք դէպի հասարակութիւնն ունեցած պարտականութիւնը աւելի ճշտութեամբ եւ եռանդով են կատարել, քան թէ մեզանից իւրաքանչիւրը:

Բայց շուտ տանք թղթի միւս երեսը: Այդ ընտանիքի հայրը՝ այժմ ալեգրորդ ուսուցիչը, բոլորովին անպակասող գրութեան մէջ է: Նա իր օրվայ ապրուստը հոգալու համար ստիպված է զառամեալ հասակում ուսուցչի տաժանելի պաշտօնը շարունակել, եւ Շուշու թեմական դպրանոցի վարչութիւնը, ինչպէս վայել է իր մեծանոցութեանը, պ. Ս. Գիւլագեանին դասեր կ'ընձատկէ, չարաթական 10 դասի է հասցրել: Պ. Գիւլագեան ստանում է ամսական 28 ռուբ. առճիկ: Այդ չնչին կօպէկներով նա պարտաւոր է երկու հոգու կերակրել, տան վարձ վճարել, մնացած բոլոր կարիքները հոգալ, հիւանդացած ժամանակ բժշկի հրաւիրել, վեց ամիս ձմեռ անցկացնել Շուշու նման տեղում, այլ եւ մի քանի կօպէկ յետ գցել, որպէս զի մահվան դէպքում հասարակութիւնից կօպէկներ չը ժողովն ու դաժաղ զարդարեն...

Ահա մի նոր փառս մեր ընտրեալների մարդասիրութիւնից: Եթէ մի օրպէ պատկերացնենք այն 41 երկար ու ձիգ տարիները, երբ յարգելի ուսուցիչը օրէցօր նկատելի կերպով մաշել է իր կեանքը եւ այսօր կատարելապէս ուժից ընկել, կարող ենք հաշտել այս տխուր իրականութեան հետ: Կատարեալ անարդարութիւն է սա, չէ՞: Դպրոցը չէ կարողանում ապահովել իր ուսուցիչներին, հասարակութիւնը թմրած է, ինքնաճանաչութեան չէ հասել, ապա ինչ է մտածում մեր հոգեւոր վարչութիւնը: Էլ որ օրվայ համար է իրան լիազօր համարում դպրոցի նկատմամբ:

Յիւրաքանչիւր ընտրեալների կենսաթոշակի հարցն է վճարում: միթէ հայ ծերունի ուսուցիչը մի ֆրանսիական բանուորի արժէք էլ չունի: Սակայն վերջացնելով մեր խօսքը, Ուսուցիչ պ. Ս. Գիւլագեանը կարօտ է ապահովութեան. նա ուժից ընկած է. կատարեալ անհոգութիւն կը լինի մեր կողմից, եթէ մենք ստիպենք նրան դարձեալ վարկու իր պատասխանատու պաշտօնը: Անհրաժեշտ է, որ հոգեւոր վարչութիւնը կամ հոգաբարձութիւնը մի օրպէ մարդասիրական զգացումներ տածէ՝ դէպի իր ուսուցիչը եւ տարեկան գոնէ 600 ռուբ. նշանակէ նրան նպաստ: Դաժաղ իրաւարարութիւնը դաժանակամները եւ զրուցելը պատկերը նրա ներկայ գրութիւնը չը պիտի թեթեւացնեն: Ուզում էք նրան պատուել եւ

աւելի անունը: Այդ հոգեւոր ուղարկվեց Կ. Պօլսի՝ այնտեղի հայերի հաւանութիւնը ստանալու համար:

Ինչո՞ւ էջմիածնի միաբանութիւնը չէր կամենում Յովսէփի կաթողիկոսութիւնը: Առաջին պատճառը, ի հարկէ, քաղաքական էր: Յովսէփը նուիրված էր Ռուսաստանի շահին, աշխատում էր ազատել հայերին մահմեդական լուծից: Իրեն ընդհանրական կաթողիկոս, նա, ի հարկէ, պիտի աւելի եւս մեծ եռանդով գործէր այդ ուղղութեամբ. բայց էջմիածինը զրանում էր պարսիկների տիրապետութեան տակ, իսկ պարսիկները չէին կամենում. որ այդպիսի մի քաղաքական գործիչ, որ Ռուսաստանում մեծ հեղինակութիւն ունի, դառնայ կաթողիկոս:

Այս պատճառներով ժամանակ միայն արդարացի է: Աւելի ճիշտ կը լինի ենթադրել, որ Արդու թեմանի պէս մի մարդ էջմիածնութեան, Ղուկասի ձեռքի տակ ապրած հոգեւորականների համար, անյարմար էր համարվում հէնց այն պատճառով, որ նա կամէր տէր էր, սիրում էր գործել եւ լաւ գործել: Դիմադրել Յովսէփին էջմիածնականները չէին կարող. իր գործը չէին նրանք Յովսէփին «առիւծ» անուանում: Իրողը չէր, որ երբ նրանք լսեցին, թէ Յովսէփը կամենում է կաթողիկոս դառնալ, վարից աճապարեցին ընդունել նրան կաթողիկոսական ընտրելի:

Հարց է առաջ գալիս եւ այն մասին, թէ ինչու Յովսէփը արքեպիսկոպոսը այդքան ուզում էր էջմիածնի դահի վրա բազմել: Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը այդ ժամանակ մի շատ ողորմելի դրութեան մէջ էր գտնվում. կաթողիկոսը ենթարկված էր Երեւանի խանին եւ հարկադրված էր տանել նրա բոլոր քանակութիւնները: Կարող էր Ռուս-

գնահատել նրա գործը:—միջոց տուէ՛ք վերջին մի քանի տարիները կուշտ եւ հանգիստ ապրելու: Ահա այդ կը լինի նրա համար ամենամեծ պատիւը:

Տ. Տէր-Գրիգորեանց

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒԹԻՑ

Յունիսի 9-ին

Մուկը կերաւ. մուկը ուտում է. մուկը կուտէ, —ահա ամենօրեայ խօսակցութեան նիւթը այստեղ: Այս տարվայ ցորենի բերքը բոլորովին ոչնչացաւ այդ փոքրիկ գաղանների ձեռքից: Միայն շատ քիչ բաղաւորներ գուցէ կարողանան գոնէ անցեալ տարվայ ցանած սերմացուն յետ ստանալ: Մնացած հողագործների ահագին մեծամասնութիւնը ցորեն առնելով պիտի ապրի եւ, ի հարկէ, պարտքերի մէջ խրվի:

Այժմանից մինչեւ սկսել են խաղողի դեռ եւս կանաչ ողկոյցները կտրատել, իսկ ինչ կը լինի խաղողի ամբողջ բերքի վիճակը աշնանը, դժուար չէ գուշակել, եթէ մեր գիւղացի այգեւորները շարունակեն ներկայիս պէս ձեռքերը ծալած նստել եւ ՌԻԷ որ նրանց վրա հասնող վտանգի դէմ միջոցներ չը գիտեն: Մի երկու այգեւոր միւսերի դէմ մաքառելու համար փորձել են թոյնը եւ իրանց ասելով՝ փորձը աղոյ է. սակայն ինչ նշանակութիւն ունի մի քանիսների ձեռք առած միջոցը, երբ ցաւը ընդհանուր է, երբ մեր այգիները—էլ չեն առնում բոլոր դաշտերը—միայն ընտրով ծածկված են եւ քանի որ առանձնակի փորձ անողների այգիները նորից միմյանց կը դառնան—իրանց անհոգ այգեւորը—հարեւանների շնորհիւ Ուրիշ բան է, եթէ գիւղը ընդհանուր ուժով սկսէ մաքառում գործը: Ահա մեծ ցաւը հէնց նրա մէջ է, որ մեր գիւղացին չը գիտէ հաւաքական ոյժ գործ դնել, գոնէ գիւղատնտեսութեան մէջ, ընտրեալ կողմից եկած պատահարների դէմ կուշտ համար: Գիւղացին ամեն բան սպասում է գիւղի վարչութիւնից կամ այդ վարչութիւնը կ'աղոյ մարդկանցից: Գիւղացին կարծես սպասում է, որ ամենաւելի նրան մարակով յիշեն էր եւ իր նմանների պարտքը. իսկ երբ նա չէ յիշեցնում—նա էլ անհոգ է,—այն ժամանակ գիւղացին բոլոր մեղքը տանուէր ի վրէժն է վաթաթում, եւ որ աւելի քան զգուշի է, ինքը ոչինչ չէ անում եւ պարտաւոր նստած սպասում է, որ ակամատես լինի իր մեղադրելի անհոգութեան պատճառով եղած վնասներին: Այսպէս է մեր գիւղացիների հոգեբանութիւնը:

Այդ ամենից վերջը ստացվում է մի դրութիւն, մի մեռելային անտարբերութիւն, որի առաջ գալը մի աւելորդ անգամ էլ յիշեցնում է, թէ այդ անտարբերները որպիսի աղէտ, ձայնից ու կամքից զուրկ արարածներ են:

սաստանի արքունիքում միշտ մեծ ուշադրութեան հանդիպած, միշտ հեղինակութիւն վայելած եւ բարձրաստիճան անձանց մէջ կենաց անց կայրած մարդը որ եւ է հրապոյր գգալ Ներսէսի խանի իշխանութեան տակ ծնողները մեղքից ինչ էլ լինէին Արդու թեմանի արքեպիսկոպոսը, ինչ դիտաւորութիւններ էլ ունենար նա կաթողիկոսութեան աստիճանի վերաբերմամբ, բայց չէ կարելի չասել, որ նրա այդ քայլը սխալ քայլ էր. Ռուսաստանում մնալով, նա աւելի օգտակար կարող էր լինել իր ազգի համար, քան որ գործելու լայն առաւելք ունէր: Ինչը ստիպեց նրան փոխել իր գրութիւնը Արարատեան դաշտի մի անկիւնում պարսկական բռնակալութեան ճշման տակ ապրելու ապագայի հետ:—Չենք կարող թաքցնել, որ այդ դէպքում մեծ գործ էր տեսնում փառասիրութեանը: Արդու թեմանը շատ փառասիր մարդ էր. եւ դարմանալի էլ չէ. նրա բախտի, նրա անօրինակ աղոթութիւնների մէջ մի ուրիշ մարդ էլ չէր կարող փառասիր չը լինել: Արդու թեմանի դրական յատկութիւններից ամենամեծը լիսակոսն այն էր, որ նա շատ գործունէալ, շատ ժիր, բարեկարգիչ փառասիր էր: Եւ այդ փառասիրութիւնը, ի հարկէ, նրան ձգում էր դէպի եկեղեցական բարձրագոյն պաշտօնը:

Գուցէ կային եւ ուրիշ, աւելի ուժեղ հանգամանքներ: Գուցէ Արդու թեմանը տեսնում էր, որ Ռուսաստանում տիրած նոր կարգերի մէջ նա այլ եւս չէ կարող Ներսէսի դերը կատարել եւ ստիպված պիտի լինի բաւականաչափ Աստուծոյ թեմի առաջնորդի դերով: Գուցէ Ռուսաստանի քաղաքականութիւնն էր նրան ուղարկում էջմիածին, իսկ նա իր երկարամեայ գործունէութեան չըրանում միշտ անձուէր էր եղել այդ քաղաքականութեան Պէտք է նկատի առնենք ժամանակը. մի այնպիսի միջոցում,

Նոյն այդ դրութիւնն է եւ այժմս. Ներկայումս միւսերի պատճառած աղէտի վերաբերմամբ (մենք աղէտ ենք անուանում, որովհետեւ մի գիւղի մէջ 4—5 հարիւր ընտանիք առանց ցորենի եւ սերմացուի մնալով աղէտից մի բան էլ աւել է) մեր գիւղական վարչութիւնը գաւառապետին ներկայացրել է մի թուղթ, հաղորդելով որ «գաշտային միւսերը բազմացել են եւ վնասներ են պատճառում», եւ կարծես թէ արանով կատարել է ամեն բան: Էլ ինչին վերադրենք մեր գիւղի պախարակելի անտարբերութիւնը:

Գիւղը հէնց այժմ էլ սեփական դրամ ունի, չը հաշուելով գանձարանում եղած գիւղատնտեսական կապիտալը: Այդ դրամով արդեօք ցորեն կ'առնվի եւ փոխարինարար կը տրվի մանաւանդ հայոց ու սերմացուից զուրկ գիւղացիներին, գիւղիս վարչութիւնը արդեօք կը միջնորդէ ուր հարկն է, որ գանձարանում խնայած գումարից մի մաս հանվի նոյն նպատակի համար: Արդեօք հէնց այժմանից չը պէտք է ինչդրենք Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնից, որ սա մեղ ցոյց տալ միւսերի դէմ կուշտ ընդունված միջոցները, թէ դեռ պիտի սպասենք, որ այգիների բերքն էլ վնասվի: Դժուարանում ենք այժմանից գուշակել: Սպասենք եւ տեսնենք:

Ինչպէս տեսնում էք, մեր գիւղացին դրոյց օգնութեան չի սպասի, եթէ ինքը անտարբեր գտնվելով հանդերձ չը դրդէ գիւղական վարչութիւնը գործելու:

Գիւղական հասարակութիւնը կազմող անդամները օգտվելով դիտել ժողովրդի ձայնից ամեն տեսակ համախոսականներ կազմելու եւ ընտրութիւններ ալոգիզմներ համար, թող ուրեմն իրանց պարտքը համարեն եւ գիւղի հոգեւոր մասին ժողովուրդը: Պաշտօնեաները երգում են տուել իրանց ընտրող հասարակութեան շահերին ծառայել: Պէտք է արդարացնել հասարակութեան վստահութիւնը:

Ա. Ի.

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Կարա, յուլիսի 10-ին

«Մշակ»-ի 99-րդ համարում արժանապատիւ Մեսրոպ քահանայ Միւսեանից խնդրել էի, Ախալցխայի երեցփոխական հայրենիքը քննարկատու համար հաշուառեաներ ընտրող անցեալ թիւ յուլիսի 9-ի ժողովը ապօրինի անուանելու փոխանակ, որը եւ իր ստանձնած գործին չէ վերաբերում եւ նրա պարտքի ու իրաւունքի սահմանից դուրս է, հրատարակել պ. երեցփոխի այդ մասին տուած մտացածին բողոքը եւ իմ կարծիքը, որպէս զի ընթերցող հասարակութիւնը կարող լինի ճիշտ գաղափար կազմել գործի մասին: Նա այդ չանելով հանդերձ, իմ տուած կարծիքագրից, ըստ քանի, մի քանի քաղաքական քաղաքականութեան տալով, առաջարկութեան «մեծ պատրաստակամութեամբ» կատարած է համարում (?) եւ «Մշակ»-ի 127-րդ

երբ ուսաց կառավարութիւնը պատրաստվում էր հաստատել իր տիրապետութիւնը Անդրկովկասում, շատ կարեւոր էր, ի հարկէ, որ Արդու թեմանի նման մի մարդ գրաւէր այնպիսի մի կարեւոր տեղ, ինչպիսին է էջմիածնի կաթողիկոսական աթոռը:

Այսպէս թէ այնպէս, Արդու թեմանը սկսեց եռանդով աշխատել, որ գլուխ գալ իր կաթողիկոսութիւնը: էջմիածնութեան արգելք չը կար, մնում էր Կ. Պօլսը: Այդտեղ Արդու թեմանի թեկնածութիւնը լուրջ արգելքներ հանդիպեց, բայց Յովսէփը գործում էր ռուս կառավարութեան միջոցով եւ Կ. Պօլսի ուսաց դեսպան Տամարա, որ գրադրութիւն ունէր Յովսէփի հետ, սկսեց ճնշումներ գործ դնել: Առաջին անգամն էր որ Ռուսաստանը հայոց կաթողիկոսների ընտրութեան գործում կատարում էր ազդու դեր: Ռուսաց դեսպանը նախախնդրով յայտնում էր ռուս պաշտօնեաներին, թէ ինքը ալոգիզմում է զիրանց ընդհանուր ծանօթ Յովսէփի կաթողիկոսութիւնը: Եւ առանց բանութիւնների անկարելի եղաւ ալոգիզմը: Ենթիւ պատրիարքը եւ Գալուստ եպիսկոպոսը, Յովսէփի կաթողիկոսութեան գլխավոր խոչընդոտները, աքսորվեցին Կ. Պօլսից եւ պատրիարք նշանակվեց Յովսէփի կուսակից Յովսէփը կառավարութիւնը հաստատեց Յովսէփի ընտրութիւնը: հաստատութեան մի հրովարտելով էլ Պաւել կայսրը տուեց: Արդու թեմանը ամենայն հայոց կաթողիկոս էր: Բայց այդ կաթողիկոսութիւնը պատճառ դարձաւ, որ առաջ եկան Դանիէլ-Դանիէլեան ծանօթ խաղաղականութիւնը, որոնք XIX դարի սկզբի մեր պատմութեան ամենամառայ էջերն են կաղնում:

(Կը շարունակվի)

համարում երկրորդ անգամ հրապարակ դառնալով, փորձում է իր նախկին ասածը ապացուցանելու ծանկթիւն չունենալով և Միւսանի հետ մասնաւորապէս, եւ ամենքի հետ ընդհանրապէս, լրացական բանական մէջ մտնել, նպատակաւոր մարմն եւ համարում ամբողջ կերպով նկարագրել վերջինս, որովհետեւ վերաբերեալ իսկական եղելով թիւնը եւ իմ կողմից վերջապէս զննել այս խնդրին։

1900 թ. փետրվար ամսին Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցու երէցփոխ պ. Մուրադեանը պատերազմական ժամանակներէն իր 1899 թ. հաշիւները ստուգել-վաւերացնելու, բայց այդ ժողովի չը կայանալու պատճառով նա իր տոմարը ներկայացնում է գործակալին Վերջինս, իմ կարգադրութեամբ, ոչ ըստ երէցփոխի մտապահին բողոքի ևս. Փրկիչ եկեղեցու աւելի քան 1000 տուն ժողովրդին, այլ քաղաքի բոլոր եկեղեցիներէ ծխականներին ապրիլի 30-ին հրաւիրում է առաջին անգամ մի քանի հարցերի մասին որոշումներ կայացնելու եւ երէցփոխի հաշիւները զննել-ստուգելու համար հաշուետեաներ ընտրելու։ Միակամներին օրինական թիւ չը ներկայանալու պատճառով առաջին ժողովը չէ կայանում եւ և. գործակալը նոյն խնդիրներէ օտիւրով երկրորդ ժողով է հրաւիրում մայիսի 7-ին։ Ժողովի մէջ տեղի ունեցած տաք վիճարանութիւնները մի կողմից, եւ միւս կողմից յարգելի գանձելով ժողովականներին մի քանի խնդիր՝ կարգաւ 1898 թ. դեկտեմբերի 28-ին մի քանի հարցերի մասին իրանց կազմած վճիռները՝ եւ այդ համապատասխանները պատճենները գործի մէջ պահանջելու պատճառով, որոշվում է ժողովը յետաձգել, մինչեւ կօնսիստորիայի կը ստացվեն նրանց պատճենները։ Դրանց պատճենները ստացվելուց յետոյ կօնսիստորիայի հրամանով եւ իմ բացակայութեան միջոցին պ. երէցփոխը դարձեալ նոյն խնդիրներէ առիթով յուլիսի 18-ին, իր նախագահութեամբ (21), ծխականներին ժողովի է հրաւիրում եւ այս ժողովը երրորդ եւ վերջին անգամում Այս ժողովին 250 ծխականներ երբեք չեն եղել, ինչպէս գրում է և. Միւսանը, այլ ժողովի ընթացքում տեղի են ունենում բուն վիճարանութիւններ, երէցփոխին հետեցնում են նախագահութիւնը եւ ժողովը շարունակելու համար նախագահելու հրաւիրում և. գործակալին, ահա այդ ժամանակ ծխականներին մեծամասնութիւնը ժողովը թողնում, հետանում է, գործը կազմում է մի խնդիր եւ 250 ստորագրութեամբ ներկայացնում հոգեւոր իշխանութեանը, իսկ ժողովում մնացող 28 ծխականները իրանց կողմից որոշումներ են կայացնում, արձանագրութիւններ կազմում եւ, ինչպէս նախընթաց ժողովներին, այնպէս եւ այս անգամին, քաջ թողնում արձանագրութիւնները գործերին վերաբերեալ անհրաժեշտ մանրամասնութիւնները Այս ամենից յետոյ նոյն յունիսի վերջին թիւի քաղաք սրբապետ Առաջնորդը Ախալցխա է այցելում, ուր երկու կողմից էլ պատգամաւորներ են ներկայանում եւ տիրող դրութեան մասին բողոքելով խնդրում են յունիսի 18-ի ժողովի որոշումները եւ նոյն ժողովից հետագայ ծխականներին գործը կազմած խնդիրը անհետեանք թողնել եւ կարգադրել չորրորդ ժողովի հրաւիրել յաջորդի (մեր) նախագահութեամբ։ Ս. Առաջնորդը բանաւոր կերպով պատմութիւն է յունիսի 18-ի ժողովի որոշումները եւ գործը կազմած խնդրադրել անհետեանք թողնել եւ չորրորդ ժողովի հրաւիրել, ինչ էլ պատմութիւնով Առաջնութեանից գալ եւ այդ ժողովին նախագահելու Այդ պատճառէր հիմնաւոր յանձնում եւ և. գործակալին յուլիսի 9-ին ժողովի հրաւիրել քաղաքի բոլոր եկեղեցիներէ ծխականներին, ու ինքս էլ Ախալցխա վերադառնալով նոյն օրը նախագահում եւ այդ չորրորդ, իսկ ըստ և. Միւսանի «նախափորջին» ժողովին, որին մասնակցելու ներկայացել էին 88 անձինք։ «Հրահանգի» 22-րդ շատ պարզ եւ բացատրութեան անկարող յօդուածի հիման վրա բայց եւ անուժ ժողովը, որը ամենայն սիրով եւ համերաշխութեամբ զբաղւած խնդիրներին մասին միաձայն որոշումներ է կայացնում եւ երեքի փոխարէն, ըստ իր իրաւանց ու ճանաչողութեան, 12 հաշուետեաններ է ընտրում։ Սրանց պաշտօնում հաստատելու համար եւ իմ կողմից ոչ միայն սխալ տեղեկութիւն չեմ տուած, որին ընդունակ էլ չեմ, այլ եւ չեմ էլ խնդրած հաստատել, ի նկատի ունենալով կօնսիստորիայի 1898 թ. մի հրամանը, որի արտադրութեան հիմնաւոր հարցաւորները հաստատութեան չեն առաջարկում։ Այս բոլորից յետոյ ընթերցողին եւ թողնում դատել, թէ՛ որչափ ծապօրէն է եղել հաշուետեաներ ընտրող ծխական ժողովը։

Կիրեղ վարդ. Կիրեղեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ առաջիկայ սեպտեմբերի 30-ին տեղի կունենայ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան գոյութեան յիսնամակի յօգելեան տնտեսաւարութիւնը։ Չանազան հիմնարկութիւններ, որոնք մտադիր են մասնակցել այդ տօնին, պէտք է իրանց չորսուսուրութիւնները եւ գիտութիւնները ներկայացնեն այդ օրվայ հաշուով։

Մեզ հաղորդում են, որ արդէն կազմվել են երդեցիկ խմբեր համերգներ տալու ցուցանանք, դէպի ժամանակ։ Պէտք է երգվեն հայերէն, վրացերէն, թուրքերէն, քրեդերէն եւ այլ կովկասեան եղանակներ։

Ժողովրդական լուսաւորութեան միջնորդութիւնը մտադրութիւն ունի լուրջ ուղղութիւն դարձնել լուսաւորութեան տարածման վրա Ռուսաստանի օտարացի ազգաբնակչութեան մէջ։ Այս նպատակով կը ժողովվեն ճիշդ տեղեկութիւններ այն ուսումնարաններին թիւ մասին, որոնք գտնվում են պետութեան ծայրերում, եւ նրանց մէջ սովորողների քանակութեան մասին։ Ուսումնարանական ցանցը նշանաւոր չափով կընդարձակվի եւ դրա հետ միասին կաւեւացնվի ուսուցիչների թիւը։ Միջնորդութեան նիւթական միջոցները առաջիկայ ուսումնական տարվանից կաւեւացնվեն, գլխաւորապէս ի նպատակ ժողովրդական տարրական կրթութեան։

Գերմանական, ֆրանսիական եւ անգլիական լրագրիւնները մեծ նշանով հետաքրքրվում են կոմա Լ. Ն. Տօլստոյի հիւանդութեան մանրամասնութիւններով։ Այն տեղեկութիւնների մեծ մասը, որոնք երեւում են ուսական լրագրիւններում նշանաւոր գրականագէտի առողջութեան մասին, իսկոյն հեռագրով հաղորդվում են օտար լրագրիւններին։ Մի քանի լրագրիւններ, ինչպէս անգլիական «Daily News» լրագիրը, ապել են համակրական յօդուածներ Տօլստոյի մասին։

Պետերբուրգից հեռագրում են «Новое Обозрѣніе» լրագրին, թէ թուրքի արաջ քաշելու ժամանակամիջոցը Անգրիկոսեան երկրի բոլոր տեղերում այսուհետեւ պէտք է տեւէ մայիսի 20-ից մինչեւ սեպտեմբերի 1-ը։

«Новое Обозрѣніе» լրագրի ասելով՝ Թիֆլիսում Պետերբուրգից տեղեկութիւն է ստացված, որ կառավարութիւնը հաստատել է առանց որ եւ է փոփոխութեան դէպի ս. Դաւթի սարի գլուխը չինվելիք ֆունիկուլիօրի տեխնիքական նախագիծը։ Փունիկուլիօրի չինութիւնը կը սկսվի հէնց այս տարի, Թիֆլիսի ծխաքարչի անաւունք ընկերութեան միջոցներով։

Կովկասեան գիւղատնտեսական եւ արդիւնագործական ցուցանանքների գործադիր մասնաժողովի նիստում կայացել է հետեւեալ որոշումը։—որովհետեւ Կովկասեան զանազան ազգութիւնների ախպրեական ներկայացուցիչների ներկայութիւնը ցուցանանքներում, անկասկած, շատ հետաքրքրական կարող է լինել, ուստի գործադիր մասնաժողովը 1000 ռուբլի է նշանակում, իրեն ծախք, այդ ներկայացուցիչների Թիֆլիս գալու եւ Թիֆլիսում ապրելու համար։

«Бѣдѣ» լրագիրը հաղորդում է, թէ Արմաւիրի երեխաներին խնամող ընկերութեան թոյլ է տուած բանալ չորս դասարանեան իշական պրօգրիմագիտ։

Ֆինանսներին միջնորդութիւնը հաստատել է ապագաբան խօսքի գործիչների համար հիմնված՝ փոխադարձ կրեդիտի ընկերութեան կառուցողութիւնը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ մեզ գրում են. «Այսօր, յուլիսի 14-ին, Էջմիածին կանչվեց Սուքիաս արքեպիսկոպոս Աստուծո՛ւ, կօնդակով կօնսիստորիայի նախադամ է նշանակվել տեղացի քահանաներից մէկը։ Ենթադրվում է, թէ Սուքիաս եպիսկոպոսը այլ եւս չի վերադառնալ»։

ՂՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 12-ին քաղաքային վարչութիւնը քննեց Բագուի նախկին օստրիականացի Դէմիստու խնդրը, որով նա խնդրում է իրագործիւն տալ իրան իր ծախսով Պետերբուրգ գնալ միջնորդելու համար, որ ինչպէս կայարանից մինչեւ Ղուրա երկաթուղու գիծ անցկացնեն։ Ուղղութիւնը ընդունվեց եւ պ. Դէմիստու արդէն եղեւթը վեց Պետերբուրգ ծանկանում ենք աչողութիւն այդ գործին։ Ի դէպ. Վրացիականագի երկաթուղու վարչութիւնը գրաւոր կերպով յայտնել է մեր քաղաքի ուղարկվալին, որ մեր ժում է երկաթուղու գիծ անցկացնել ինչպէս մաղից Ղուրա»։

ՊԵՏԱՏԻՊՈՐԱԿԻՑ մեզ գրում են. «Բոլոր չորս կուրորաներում մի շարք պավիլիոններ

կան լրագրիւններ ծախելու համար. որ հեռուոր անկիւնից ասես՝ լրագրիւններ են ստացվում, բայց հայոց լրագրիւններից։ Եթէ այստեղ «Մրշակը» ստացվէր, ամենաքիչը օրեկան 150—200 օրինակ պիտի ծախվէր։ Բնչու մի հայ մարդ չէ վերցնում այդ գործը. մենք և՛ չենք սպասելու, որ հայոց մամուլի մասին մտածէ պ. Սուլթանը, որի ձեռքին են այդ պավիլիոնները։ Պետերբուրգի եւ Արմաւիրի հայոց ուսումնարանների վարժապետներ պ. պ. Սուքիասեան եւ Մեհրաբեանց ընկերովի ծխախոտի խանութ ունեն. Բնչու այդ պարոնները այս բանի մասին չեն մտածում։ Դրանց արհեստին աւելի մօտ է լրագիր, քան թէ ծխախոտ տարածելը»։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ մեզ գրում են. «Լեւոնիք, որ Ալեքսանդրօպոլի յաջորդ է նշանակվել կաթողիկոսի գիւղատնտեսական կորիւն վարդապետը»։

ՍԻՄՖԵՐՊՈԼԻՑ մեզ գրում են. «Յունիսի 11-ին, 61 տարեկան հասակում, ծանր հիւանդութիւնից յետոյ, վախճանվեց Ա. Օ. Սպենդարեան։ Հանգուցեալը մտադիր էր այստեղի աղքատ ընտանիքների համար մի տուն շինել, որի տեղն արդէն զննել էր եւ շուտով պիտի ձեռնարկէր բնակարանների շինութեան, բայց վաղահաս մահը թոյլ չը տուց նրան այդ բարի նպատակի իրագործելու։ Սակայն, ինչպէս յայտնեց որդին, մահից առաջ նա պատուիրել է շուտով ձեռնարկել բնակարանների շինութեանը։ Փաղաքում լուրեր են պտտում, թէ հանգուցեալի որդին (երաժիշտ Ա. Սպենդարեան) իր հօր յիշատակը յաւերժացնելու համար մտադիր է այստեղի եկեղեցում իր հաշիւով վարձու խումբ պահել»։

ՆՈՐ-ԱՍՏԱՅԵՏԻՑ մեզ գրում են. «Տեղիս աւագ քահանայ Տէր-Թադէոս Տէր-Արքայանքեանը, վերադարձած այն բանից, որ իր ընկեր քահանաները օռու լուրեր են տարածում իր մասին, սկսում է ամենամիայն կերպով հայհոյել նրանց եկեղեցու մէջ եւ եկեղեցուց դուրս գալու ժամանակ, առանց ստուգելու թէ տեղիս գործակալ Թոմա վարդապետը բողոքել է եւ արդէն երեւանի թիմի առաջնորդը գրաւոր կարողադրել է, որ ինչպէս քահանա տաան եւ հինգ օր փիլոսոֆ ձեռնի եկեղեցում կանգնի ժողովրդի մէջ, բայց ցաւալին այն է, որ նոյն պատճին ենթարկված է նաեւ տեղիս միւս աւագ քահանայ Տէր-Սեդրակ Տէր-Միքայէլեանը, իւր ուսու լուր տարածող, մինչեւ, ընդհանուր կարծիքով, նա միանգամայն անմեղ է այդ զրպարտութեան մէջ։ Վերջինիս համար ժողովրդից շատերը բողոքել են եւ խնդրել, որ նոր զննութիւն նշանակվի»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲՐԱՋԻԼԻԱՅԻՑ

Ս. Պաուլօ, մայիսի 18-ին Այս նամակով կը տեղեկագրեմք երկու թըշուառ հայ երիտասարդաց մահը, որ տեղի ունեցաւ մօտ օրերս Բրազիլի մէջ։

Առաջինն է Գալուստ Յովհաննիսեան, 24 տարեկան, բարձրահասակ մի երիտասարդ, Չինե գիտեր ստոյգ իր ծծողալարը. իր պատմութեամբ՝ դեռ փոքր եղած ժամանակ զնացած է Կ. Պոլիս եւ յանձնված հայոց կենտրոնական վարժարանը կամ մի ուրիշ հաստատութեան մէջ ուսմանը ընդունելու։ 1896 թ. աշնանը առաջ մէկ կամ երկու տարի Կ. Պոլիս ուսական դեպատեանում մէջ սպասաւորութեան պաշտօն ունեցած է. վերջիս գաղթած է Պարիզ, ինքը բաւական տեղեկ էր խոհարարի արհեստին։ 1899 թ. յուլիսին Պարիզէն կրկնաբանալ պոլսեցի երկրաչափ (ինժեներ) զօկտօր Միհրան Լաթիֆի հետ. զօկտօրն կը խոստանայ իր ծախքը վճարել մինչեւ Բրազիլ եւ մշտական պահել զինքը իր ընտանիքի խոհարար Պարիզէն կը հասնի տեղս, Ս. Պաուլօ, ապէջ կը մեկնին Ս. Սիմօն, որ երկաթուղով 12 ժամվայ ճանապարհ է. Դօկտօր Միհրան Լաթիֆը Պարիզէն կուգար մի ֆրանսիացի ընկերութեան կողմէն Ս. Սիմօնի մէջ գտնված յիշեալ ընկերութեան ագարակին կառավարիչ պաշտօնով։ Ագարակին բերքն է սուրճ, ունի 400 աւելի իտալացի երկուսեռի գաղթական բանուորներ։ Միհրան Լաթիֆ եւ Գալուստ Յովհաննիսեանը հազիւ կը կարողանան ապրել մէկըմէկու հետ 5 կամ 6 օր. զօկտօրը կուտայ իրեն 12 օրեկան խոհարարի դէպի Ս. Պաուլօ՝ ըսելով թէ հայեր կան՝ հոն կարող եւ մի պարագայեւք գտնել Տեղոյն եւ լեզուին անվարժ երիտասարդը մի օր երեւաց մեր վա-

ճառատան մէջ, պատմեց զօկտօրին հետ պատահածը եւ նաեւ, ըսաւ, Պարիզէն ինձի խոստացաւ 80 ֆրանկ ամսական վճարել, 5 ըստակ չի վճարելով զիս թափառական բրաւ։ Մենք կարողացանք իրեն գործ գտնել, մի ամիս աշխատեցաւ, յետոյ ըսաւ, որովհետեւ շատ կը նեղուիմ զօկտօրին ինձի ըրած վատութեանը, որոշեցի երթալ եւ ըսնի միջոցով իմ երկու ամսական աշխատանքս պահանջել եւ ստանալ։ Մեր խրատները չի աղքեցին, գընաց, երբ երկուքն կուգան երես առ երես, կրակեն տաք խօսակցութիւն եւ կռիւ։ Դօկտօրը կը կանչէ երկու օստիկան եւ կը տանեն Գալուստը բանտ, 6 կամ 7 օր պահելով, օստիկանի հսկողութեամբ բերին տեղս, Ս. Պաուլօ, հանդերձները պատտաւ, առանց կօշիկի եւ սարսափելի աղոտտած վիճակի մէջ, Նորէն պիտոյքը հոգալով մի ամիս վերջ խրկեցինք զինքը Սանթօս, մի հայի քով աշխատելու։ Գնաց աշխատեցաւ եւ նամակ ալ ընդունեցինք։ Մի ամիս վերջ Սանթօյի մէջ գտնվող հալը կը ձգէ եւ կերթայ դէպի Բարա նահանգի կողմերը, իսկ Գալուստ Յովհաննիսեանը կը հիւանդանայ, կը փոխարինեն հիւանդանոց եւ հոն իր մահը կը կնքէ։ Մենք լսեցինք սուրիացի գաղթականներէ, որոնք փառաւոր թաղում սարքած էին։

Երկրորդ վախճանվածն է Կարապետ Ռուֆֆի, 28 տարեկան, միջին հասակով մի երիտասարդ, Թիւրքիոյ Պանտրազ գաւառէն, հարուստ ընտանիքի զաւակ, Հօրը ամենամեծ հարստութիւնը կը կազմէ այն ագարակը, որ Պանտրազէն երկու ժամ հեռու է։ Սրա պատմութեամբ ժամանակին վաճառական հօրեղայրներ ունեցած է Պօլսոյ մէջ, ուսմանը ընդունած է Պօլիս եւ ընթացաւարտ եղած է «Մէթիստիկ օմանիէ» դպէսէն, գիտէր ինչին կարգի Թուրքերէն եւ ֆրանսերէն։ 1897-ին զիմած էր արտաւանման։ Չուրիքերիս եւ Բալկանեան մի երկու փոքրիկ երկրներն այցելելով, գացած է կրկին անգամ Կ. Պօլիս, ուր մի ամիս ընտանիքի վրա կառավարութեան հսկողութեամբ խրկած են զինք իր ծննդավայրն Անցեալ տարվայ սկզբներն զիմած է նորէն Պարիզ։ Պարիզ մի քիչ իւզազործութեան արհեստին ուղղութիւն առաւ, կուլ, կուլ, զեւորվի Բրազիլ եւ կերթայ Միւսաի նահանգ (Արգանդի երկրի)։ Հոն 6 ամիս չափ աշխատելով, եկաւ տեղս, Ս. Պաուլօ, զինքն ճանչցանք, եւ մեղմէ առաջին պատեհութեամբ տեղեկութիւն խնդրեց պոլսեցի զօկտօր Միհրան Լաթիֆի վրայով, մենք պատմեցինք նրան ուր ըլլալը եւ Գալուստ Յովհաննիսեանի հետ իր ունեցած վարձանքն։ Ինչ որ ալ ըլլաւ, Եսաւ, կուգան մի անգամ տեսակցիլ, լսած եւ, ըսաւ, Պարիզէն, որ 400 աւելի գործաւորներ ունի, կրնամ իրեն մօտ լաւ գործ մը գտնել։ Չինք խրկեցինք, 15 օրէն վերադարձաւ Դօկտօրն կըսէ եղբ, որ պատրաստ գործ մը չունիմ, եթէ սպասես 3 կամ 4 ամիս, կաթիլուրեւ առատ ժամանակը՝ այն ատեն ես պատրաստ մեքենաներ ունիմ, կուտամ քեզի եւ կը յանձնարարեմ քեզ մի բրազիլցի ագարակատիրոջ, ուր կարող ես մշտական կաթ գտնել եւ աշխատել։ Սպասեց տեղս 4 ամիսէն աւելի, նամակներ գրեց, վերջապէս հրաւիրվեցաւ գնալ, մէկ ամիս աշխատելով նորէն վերադարձաւ, առարկելով թէ 4 կամ 5 հարկուր ֆրանկի պէտքութիւն կայ, որպէս զի գործը շարունակեմ։ Գտանք իրեն մի ընկեր, որ փնտաւին չափ ըստակ ունէր, զօկտօրէն մեքենաներն ալ ձրի բերին, գնացին աշխատելու. դժբախտաբար այս անգամ եւս 15 օրէն վերադարձաւ, ըստաւինքն եւ մեքենաները կորստնցունելով, թէ ինչ պատահեցաւ Աստուած թող գիտնայ։

Այս վերադարձիս ալ չի կարողացաւ որ եւ է գործ ձարել։ Խոստացանք իրեն գնել մի նաւու տոմսակ, որ, եթէ կը կամի, վերադառնայ Եւրօպա, բայց նա չորսնակալ ըլլալով մերժեց մեր որոշումը, եւ մի հայի ընկերականով գնաց Բիթօ-Ժանէյրօ։ Իր ընկեր հալը կը մեկնի հայրենիք, իսկ նա քանի օր վերջ, ճիշդ անտէր Գալուստ Յովհաննիսեանի պէս, կը հիւանդանայ, կը փոխադրվի հիւանդանոց եւ իր մահվան վերջին հրաժեշտը կուտայ տարոյս մարտ ամսոյն սկզբներն։ Չենք խորհիլ թէ զօկտօր Միհրան Լաթիֆը, լսելով այս երկու անտէրներու մահը, ցաւ զգալ այնչափ, որչափ իր մեքենաները։ Ըստ մեր դատողութեան՝ զօկտօրը եթէ կամէր ապրեցնել, կատարած պիտի ըլլար մեծ մարդասիրութիւն, եւ ո՛վ զիմէ, գուցէ, ինք այսօրվան համար զօկտօր եղած է։ Հանգիտ մեր երկու հայ երիտասարդներուն։

Յ. Ս. Գալաճեան

